Դանիել Վարուժան

Կարոտի նամակ

Կը գրրե մայրս. «Ո՛վ իմ որդյակըս պանդուխտ,
Դեռ մինչև ե՞րբ պիտ՚ անծանոթ լուսնի տակ
Օրերդ անցնին, դեռ մինչև ե՞րբ հեգ գըլուխդ
Ես չըսեղմեմ լանջքիս տաք:
Հերի՛ք օտար սանդուղներեն ելլեն վեր
Ոտքրեդ՝ որ օր մ՚ափերուս մեջ տաքցուցի.
Հերի՛ք ալ սիրտս՝ ուր իմ ծիծերս եմ պարպեր՝
Դատարկ սըրտես դուրս հյուծի:

Ջահրակին տակ թներս աշխատ հոգներ են.
Կ՚հուսեմ պատանքս ա՛լ ծամերովս ըսպիտակ.
Ա՜խ, քեզ տեսնեն անգամ մ՚աչքերս ու փակեն
Թող հոգիս ա՛լ իրենց տակ:

Դըրանս առջև կը նըստիմ միշտ տըխրալիր
Լուր կ՚ուզեմ վրադ ամեն կռունկե՝ որ կ՚անցնի.
Այն ճյուղն ուռի՝ զոր քու ձոքով տընկեցիր,
Վըրաս կ՚ընե հովանի:

Իրիկունները զո՛ւր դարձիդ կը սպասեմ.
Կու գան կ՚անցնին գյուղին քաջերը համակ.
Մշակը կ՚անցնի, կ՚անցնի կովարծը վըսեմ.
Կը մնամ լուսնին հետ մինա՜կ:

Ավերակ տան մեջ անտերունջ եմ թողված,
Մերթ շիրիմիս, մերթ օճախիս ծարավի.
Կրայի մը պես՝ որուն աղիքն իր կոտրած
Պատյանին հետ կը կըցվի:

Եկո՛ւր, որդյա՛կ, հայրենի տունըդ շենցուր.
Դուռն են կոտրեր, մառաններն ո՛ղջ դատարկեր.
Կը մըտեն ներս լուսամուտեն ջարդուփշուր
Գարնան ամբողջ ծիծառներ:

Այն բազմաթիվ հոտեն, գոմին մեջ, եղո՛ւկ,
Մընացեր է խոյ մը միայն քաջարի՝
Որուն մայրն օր մ՝ – հիշե՛, որդյա՛կ– դեռ գառնուկ
Կերավ ափիդ մեջ գարի:

Թեփով բրընձի և առվույտով պատվական
Սընունդ կու տամ արդ անոր պերճ դրմակին.
Տոսախ սանտրով կը սանրեմ բուրդն աղվական.
Ան զոհ մըն է թանկագին:

Դարձիդ՝ պըճնած վարդերով գլուխն իր համակ՝
Պիտի մորթեմ կյանքիդ համար ծաղկատի.
Իր արյան մեջ պիտի լըվամ, քա՛ղցր որդյակ,
Ոտքերդ հոգնած պանդուխտի»: